


ՆԱՍԱԿ ԳԻՆԵՄՈՆՆԵՐՈՒ ՄԵՂՔԻՆ ՄԱՍԻՆ

Մեծ փխրութեամբ եւ ցաւագին ար- ցունքներով պիտի զարգացնեն այս ճառին նիւթը եւ ցոյց պիտի փամ գինեմոյներուն անգիղջ վապորիւնը, բամբաստողներու անապաշաւ անօր- նութիւնները, որոնք միշտ որովայնի սպասատրներ են եւ կը մնան դեի գինեմոյութեան ծառայութեան մէջ: Ա- նոնք միշտ հայիոյս, արհամարհած եւ անարգած են Աստուծոյ պապորիւն- ները: Պօղոս անոնց վրայ լայով կ'ողբար զանոնք կոչելով «Քրիստոսին թշնամիները, որոնց վախճանը, կո- րուսար է. իրենց Աստուածը իրենց փորն է եւ ամօթալի բաներով կը հպարտանան եւ միայն երկրաւոր բա- ներու մասին կը մտածեն» (Փիլ. 3.18- 19) եւ երկնային առաքինի կեանքի մասին չեն մտածեր երբեք: Նակատակ իրենց ուշիմութեան՝ խոր ճարակող անբան կենդանիներու կը նմանին, որովհետեւ ոկրամոյներն ու գինեմոյ- ները Քրիստոսի խաչին եւ չարչա- րանքներուն թշնամի ըլլալով՝ միշտ իրենց որովայնը կը պաշտեն եւ ոչ թէ Քրիստոսը եւ իրենց կեանքը աստուծոյ խելագարութեան մէջ կ'անցնեն: Անոնց համար մարգարէն յարակորէն կարծիք կը յայտնէ. «Խեղճերն ու ան- միտները պիտի կորսուին»:

Եւ ո՞ր կարելի է այս աստիճան խե- լագար մը գրանել, որ չի գիտեր թէ կոյրը գրկուած է արեւի լոյսէն: Եւ եթէ այս մէկը գրկանք է, պէտք է գիտնալ թէ որքան անելի մեծ է գրկանքը եւ անբանելի է կորուսիւնը անոնց, որոնց համար պապորիւններու լոյսը խաւարած է...

(Ճաներ Յովհան Մանդակունի)

ՍՐԲԱՆՈՅՍ ՄԻՌՈՆԸ



Միւ ռոնու ած Մանու կը

Երբ հայ մանուկին ձեռքերը կը միւռոնուին, անոնք կը դառնան մշտագործ ու բարեգործ ձեռքը Յիսու- սի եւ մշտաշարժ ու քաղցրաշարժ ձեռքը անշարժ Աստուծոյ՝ դէպի աղբատը շարժող:

Երբ հայ մանուկին սիրտը կը միւ- ռոնուի, անիկա կը դառնայ տուն՝ տնագուրկ Աստուծոյ, գահ՝ Աստուծոյ անգահակից Որդիին, եւ տաճար՝ անմահարար Սուրբ Հոգիին:

Երբ հայ մանուկին կոնակը կը միւ- ռոնուի, ան աներեւոյթ թշնամիին յարձակումներուն դէմ անպարտելի թիկնապահ կ'ունենայ զօրքերու հը- զօր Տէրը եւ Արարիչը երկինքներուն ու երկրին:

Երբ հայ մանուկին ոտքերը կը միւ- ռոնուին, ան սրբութեան, արդարու- թեան ու ճշմարտութեան ճամբէն քալելու կարողութեամբ կ'օժտուի եւ կը դառնայ ճանապարհորդակից երկինքի ճամբուն՝ Քրիստոսի:



ՔՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՀ.119.105)

ԺԵ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 7 ՕԳՈՍՏՈՍ 2022

ԹԻՒ 32

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես. 5.1-10: Ա. Կր. 6.15.711: Ստ. 19.3-12

Քանի մը օրեր ետք Յիսուս վերադարձաւ Կափառնաւ: Անմիջապէս, որ լուր տարածուեցաւ, թէ տունին մէջ կը գտնուի, շատեր հաւաքուեցան հոն, այնքան որ դրան առջեւ իսկ տեղ չէր մնացեր: Եւ Յիսուս Աստուծոյ խօսքը կը քարոզէր անոնց:

Այդ միջոցին Յիսուսի բերին անդամալոյծ մը, որ չորս հոգիներ շալկած էին: Երբ ամբոխին պատճառով չկրցան զայն Յիսուսի մօտ բերել, քակեցին տունին տանիքը եւ առաստաղը բանալով՝ անդամալոյծը մահիճով վար իջեցուցին: Յի- սուս անոնց հաւատքը տեսնելով ըսաւ անդամալոյծին. «Որդեակ, մեղքերդ ներ- ւած ըլլան քեզի»:

Օրէնքի ուսուցիչներէն ոմանք, որոնք հոն նստած էին, սկսան մտովի քննա- դատել զայն. «Ինչպէ՞ս կը համարձակի ասանկ բան ըսել. ըրածը հայիոյթիւն է: Աստուծմէ՞ զատ ո՞վ կրնայ մեղքերը ներել»:

Յիսուս վայրկեանին գիտցաւ անոնց մտածումը եւ ըսաւ. «Ինչո՞ւ այդպէս կը մտածէք: Ո՞ր մէկը անելի դիտին է. անդամալոյծին «մեղքերդ ներուած են քեզի» ըսելը, թէ «ե՛լ, մահիճդ ա՛ն եւ տունդ գնա՛» ըսելը: Բայց որպէսզի գիտնաք, թէ մարդու Որդին երկրի վրայ իշխանութիւն ունի մեղքերը ներելու՝ ահա՛ նաեւ կը բժշկեմ զայն»:

Ու դառնալով անդամալոյծին, ըսաւ. «Քեզի կ'ըսեմ. ե՛լ, ա՛ն մահիճդ եւ տունդ գնա՛»: Անդամալոյծը անմիջապէս բոլորին առջեւ ոտքի ելաւ, վերցուց իր մա- հիճը եւ դուրս ելաւ: Բոլորն ալ զարմացան. կը փառաւորէին զԱստուած եւ կ'ըսէին. «Այսպիսի բան բնաւ տեսած չէինք»:

ԱՌԱԿ 6.1-3

Որդիա՛կ, եթէ բարեկամիդ համար երաշխաւոր դառնաս, դուն քեզ թշնամիին կը մատնես, որովհետեւ մարդուս շրթները մեծագոյն որոքայթն են իրեն համար եւ մարդը իր խօսքերով է որ ծուղակը կ'ինայ:

Արդ, որդեա՛կ, պահէ՛ իմ պատուիրաններս եւ դուն պիտի ապրիս, որովհետեւ դուն բարեկամիդ համար չար մարդոց ձեռքը ինկար. գօտեպնդուէ՛ եւ մի՛ յուսահատիր, նոյն ձեռով խրախուսէ՛ նաեւ բարեկամդ, որուն երաշխաւոր եղար:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԵՓԵՍՈՍԻ Ս. ԺՈՂՈՎՈՅՆ Ս. ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ

Եփեսոսի Տիեզերական ժողովը իր տօնակատարութիւնը ունի Հայց. եկեղեցւոյ մէջ՝ վերափոխման Բարեկենդանի Շաբաթ օրը:

Եփեսոսի տիեզերական ժողովը գումարուեցաւ 431 թուականին, մասնակցութեամբ՝ 200 հայրապետներու, քննելու համար Նեստորի աղանդաւորական մոլար վարդապետութիւնը:

Նեստոր կ'ըսէր, որ Յիսուս մարդ ծնաւ մեզի նման, ապա աստուածային բնութիւն ստացաւ: Նեստոր կ'ուսուցանէր նաեւ, որ Ս. Կոյս Մարիամ Աստուածածին չէ, այլ՝ մարդածին: Նեստորի այս մոլար վարդապետութիւնը մեծ խոռվութիւն յառաջացուց:

Նեստորի դատապարտելի ընթացքը քննելու համար, Փոքր Թեոդորոս կայսեր հրամանով, Եփեսոս քաղաքին մէջ, 200 հայրապետներու մասնակցութեամբ, տեղի ունեցաւ տիեզերական ժողով: Ժողովի ընթացքին դատապարտուեցան Նեստորն ու իր համախոհները եւ հաստատուեցաւ Կիւրեղ Աղեփսանդրացիի բանաձեւը՝ Քրիստոսի բնութեան վերաբերեալ «Մի բնութիւն Բանին մահճանցելոյ» նախադասութեան մէջ իտացնելով: Ըստ այս բանաձեւին՝ Յիսուս ծնաւ, որպէս Աստուած եւ իր աստուածային ու մարդկային բնութիւնները անշփոթ կերպով իրար միացան եւ կազմեցին **մէկ բնութիւն**: Իսկ Ս. Կոյսը դաւանեցին **Աստուածածին**:

Հայ եկեղեցին եւս ընդունեց Եփեսոսի ժողովի կանոններն ու որոշումները եւ եկեղեցական օրացոյցին մէջ յատուկ օր ալ նշանակեց տօնելու եւ յաւերժացնելու համար այդ ժողովի յիշատակը:

Այստեղ անհրաժեշտ կը համարենք յիշատակել, որ Հայ եկեղեցին կ'ընդունի միայն երեք տիեզերական ժողովներ՝ Նիկիոյ, Եփեսոսի եւ Կ. Պոլսոյ, եւ կը դաւանէ միայն անոնց որոշումներն ու բանաձեւումները:

ՀԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ

ԻՆՉ ՀԱՆԴԻՍԱԽՈՐՈՒԹԵԱՍԲ ԿԸ ԿԱՐԴԱՅՈՒՒ ԱԵՏԱՐԱՆԸ:

Աւետարանի ընթերցումը միւս բոլոր ընթերցումներէն շատ աւելի մեծ բացառութիւն ունի: Ձայն կը կարդան առանձին հանդիսաւորութեամբ: Սարկաւազը կը ձայնէ Օրթի (Ոտքի)՝ քահանան՝ Խաղաղութիւն ամէնեցուն (Խաղաղութիւն ամէնուղ)՝ դպիրները՝ եւ ընդ հոգւոյդ քում (նաեւ քու հոգիիդ)՝ սարկաւազը՝ երկիւղածութեամբ լուարուք (Երկիւղածութեամբ մըտիկ ըրէ՛ք)՝ Աւետարանը կարդացողը՝ Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի (Յիսուս Քրիստոսի Աւետարանը՝ Մատթէոսի համաձայն)՝ դպիրները՝ Փառք քեզ Տէր Աստուած մեր (Փառք քեզի, Տէր Աստուած մեր)՝ սարկաւազը՝ Պռոսխումէ (մտիկ ընենք)՝ ժողովուրդը՝ ասէ Աստուած (Աստուած է, որ կը խօսի):

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս

Կ'ԱՆԿՐԱԿՎՈՆՆՔ ՅԻՍՈՒՍԻ ՏՈՒՄԸ ԲԱՐԻՔՆԵՐՈՒՆ

Մեղանապետը համտեսեց գինիի փոխուած ջուրը, բայց չգիտցաւ, թէ ուրկէ էր, թէեւ սպասաւորները, որոնք ջուրը լեցուցած էին, գիտէին (Յե 2.9): Մեղանապետը գիտէր, թէ փեսան որքան գինի ունէր իր տրամադրութեան տակ եւ գիտէր, որ գինին սպառած էր, բայց թէ այս նոր գինին ուրկէ եկած էր՝ չէր գիտէր: Եւ ասիկա է տարօրինակը, որովհետեւ սեղանապետը փեսայէն աւելի տեղեակ պէտք էր ըլլար գինիի եւ հարսանիքի ընթացքին գործածուելիք ամէն ուտելիքներու քանակին: Գիտնալը՝ իր պարտականութիւնն էր: Բայց հոս կը տեսնենք, թէ ան չէր գիտէր գինիին ուրկէ եկած ըլլալը եւ չէր գիտէր, թէ ասիկա Յիսուսին պարգեն էր իրենց:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ Ո Գ Ե Ի Ո Ր Դ Ա Ս Ը

Այսօր որքան մարդիկ կան, որոնք կը վայելեն տեսակ-տեսակ բարիքներ եւ սակայն չեն գիտէր, թէ այդ բոլորին տուիչը Աստուած ինքն է: Կ'անդրադառնա՞նք, որ կէանքը եւ կէանքին ամէն մէկ օրը եւ օրուան ամէն մէկ ժամը եւ օրը լեցնող իւրաքանչիւր բարիք Յիսուսի պարգեն է մեզի:

ԵՅԵ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒՉԵՍ...

ԵՐԲ ԼՔՈՒՄԸ ԵՒ ԱՌԱՅՑԻՆ ԿԸ ԶԳԱՍ, ԿԱՐԱՎ՝ ՍԱՂՄՈՍ 31

Ո՛վ Տէր, քեզի՛ ապաւինեցայ. թող ամօթով չմնամ բնաւ: Արդար ես դուն, ազատէ զիս: Ականջդ ինձի՛ խոնարհեցուր, եւ փութա՛, ազատէ՛ զիս: Ինձի պաշտպան, ապաստանարան եղի՛ր, իմ փրկութեանս ապաւե՛նը: Իմ ապաւենս եւ իմ ամրոցս դո՛ւն ես, դուն ի՛նքդ զիս առաջնորդէ եւ պաշտպանէ, որպէսզի քու անունդ փառաւորուի: Չիս դո՛ւրս բեր որոգայթէն, գաղտուկ ինձի դէմ լարուած, որովհետեւ դո՛ւն ես իմ ապաստանս: Քու ձեռքերուդ ես կը յանձնեմ իմ հոգիս, ո՛վ Տէր, Աստուած ճշմարտութեան, դուն որ փրկեցի՛ր զիս: Դուն կ'ատես անոնք՝ որոնք սնոտին կուռքեր կը պաշտեն, մինչեւ ես ինքզինքս քեզի՛ Տիրոջ վստահած եմ: Քու սիրովդ պիտի ցնծամ եւ ուրախանամ, որովհետեւ թշուառութիւնս տեսար, ճանչցար տառապանքներս, եւ զիս թշնամիին ձեռքը չմատնեցի՛ր, այլ՝ վտանգէս զիս դուրս բերի՛ր եւ զիս ոտքի կանգնեցուցի՛ր:

Ո՛վ Տէր, ողորմէ՛ ինձի, որովհետեւ նեղութեան մէջ եմ: Տրամութենէս տկարացան աչքերս, հոգիս եւ մարմինս:

Օրհնեալ է Տէրը, որ իր սքանչելի սէրը ցոյց տուաւ ինձի: Ամէն:

ՄԻՇՏ ՍԱՂՄՈՍ ԿԱՐԿԱՆՔ